ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով, ինչպես նաև 99-րդ հոդվածով և 150-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վահե Հակոբյանի՝ որպես Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Որոշման նախագծին կից ներկայացում ենք «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության որոշումը՝ Ազգային ժողովի պատգամավոր Վահե Հակոբյանի՝ որպես Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու վերաբերյալ և հիմնավորումը:

Նախագծի հիմնական զեկուցողն է պատգամավոր Ծովինար Վարդանյանը:

Խնդրում ենք ներկայացված որոշման նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

30.06.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով, ինչպես նաև 99-րդ հոդվածով և 150-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն իր 2022 թվականի հունիսի 28-ի նիստում

Ո Ր Ո Շ Ե Ց

Հանդես գալ որոշում ներկայացնելու նախաձեռնությամբ եւ շրջանառության մեջ դնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վահե Հակոբյանի՝ որպես Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

28.06.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վահե Հակոբյանի լիազորությունները՝ որպես որպես Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

2022թվական, հուլիսի —

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
(Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վահե Հակոբյանի՝ որպես Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագծի)

Համաձայն ԱԺ կանոնակարգ օրենքի 138-րդ հոդվածի Մշտական հանձնաժողովների նախագահների եւ նրանց տեղակալների պաշտոններում պատգամավորների կազմից թեկնածուների առաջադրման իրավունքը խմբակցությունների միջեւ բաշխվում է Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը՝ ըստ յուրաքանչյուր պաշտոնի համար ստացված գործակցի, որն էլ հաշվարկվում է համապատասխան բանաձեւով:

Վերոնշյալ բանաձևի գործարկման արդյունքում էլ «Հայաստան Դաշինք» խմբակցության պատգամավոր Վահե Հակոբյանը առաջադրվել է Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի համաձայն մշտական հանձնաժողովի նախագահի վրա դրվել են մի շարք պարտականություններ (նախապատրաստում եւ նախագահում է հանձնաժողովի նիստերը,գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստ, մասնակցում է Խորհրդի նիստերին, ղեկավարում է հանձնաժողովի քարտուղարությունը, համակարգում է ենթահանձնաժողովների եւ աշխատանքային խմբերի աշխատանքը, համակարգում է Ազգային ժողովի մարմինների եւ Աշխատակազմի հետ հանձնաժողովի, ինչպես նաեւ հանձնաժողովի քարտուղարության գործունեությունը, հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը, ընթացք է տալիս եւ պատասխանում հանձնաժողովին ուղղված գրություններին,կարող է հանձնաժողովի իրավասությանը վերապահված նախագծի վերաբերյալ կարծիքներ ստանալու նպատակով այն ուղարկել գիտական, ուսումնական հաստատություններ, ինչպես նաեւ հանձնաժողովի նիստերին հրավիրել մասնագետներ, հանձնաժողովին իրազեկում է նրա որոշումների կատարման ընթացքի մասին, Աշխատակարգով սահմանված կարգով հաշվառում է հանձնաժողովի նիստերից եւ հրավիրած խորհրդարանական լսումներից հանձնաժողովի անդամների բացակայությունները):

Հարկ է նշել, որ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կարգավորման դաշտում են գործունեության այնպիսի կարևոր ոլորտներ ինչպիսիք են՝ հարկեր, տուրքեր, վճարներ, արդյունաբերություն, քաղաքաշինություն, էներգետիկա, բնական

պաշարներ, տրանսպորտ, կապ, հեռահաղորդակցություն, ինտերնետ (համացանց), արտադրական ենթակառուցվածքի այլ ճյուղեր, զբոսաշրջություն, առեւտուր եւ ծառայություններ, ձեռնարկատիրական գործունեություն, պետական գույքի կառավարում, սակագներ, ներդրումներ, տնտեսական մրցակցություն, հակամենաշնորհ եւ այդ ոլորտները կարգավորող օրենքներ:

Ազգային Ժողովի ութերորդ գումարման առաջին օրացուցային կիսամյակի ընդհանուր 342 քվեարկություններից Վահե Հակոբյանը չի մասնակցել 194-ին: Ազգային Ժողովի ութերորդ գումարման ընթացքում հրավիրված 25 Խորհրդի նիստերից բացակայել է 20 անգամ:

Ազգային Ժողովը ութերորդ գումարման ընթացքում ընդունել է 253 օրենք, որոնցից 83-ի համար գլխադասային է եղել տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը:

ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման ընթացքում ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը կազմակերպել է թվով 27 հերթական և արտահերթ նիստեր: Հանձնաժողովի նախագահը նիստերի նախապատրաստման, կազմակերպման աշխատանքներին չի մասնակցել, չի նախագահել թվով 11 նիստ, այնուհետև Քարտուղարությանը հանձնվող վերոնշյալ թվով նիստերի օրակարգերը և արձանագրությունները Նախագահի կողմից չեն ստորագրվել: Նրա կողմից չեն ստորագրվել նաև Քարտուղարությանը հանձնվող օրակարգերի արձանագրությունները, Հանձնաժողովում դրական եզրակացություն ստացած օրենքի նախագծերը և մի շարք այլ փաստաթղթեր:

Նշեմ նաև որ հանձնաժողովի ընդունարանը պարբերաբար փակ է եղել իսկ զանգերը՝ անպատասխան: Հանձնաժողովի նախագահի կողմից հանձնաժողովի անդամներին չեն փոխանցվել տնտեսվարողների կողմից ուղարկված մի շարք միջոցառումներին մասնակցելու հրավերները՝ խոչընդոտելով պատգամավորների լիազորությունների հրացումն ու քաղաքացիների իրավունքները:

Հարկ է արձանագրել, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության, ինչպես նաև նրա լիազորությունների դադարեցման հարաբերությունները կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թե՛ ընտրության և թե՛ լիազորությունների դադարեցման գործընթացները գտնվում են բացառապես Ազգային ժողովի խմբակցությունների որոշումների կայացման և Ազգային ժողովի կողմից սեփական գործունեության կազմակերպման տրրոյթներում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, հետևաբար խմբակցություններն իրենք են որոշում, թե ում թեկնածությունն են անհրաժեշտ գտնում առաջադրել մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում: Այնուամենայնիվ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն մշտական հանձնաժողովի նախագահն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 137-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկի թեկնածուն կարող է առաջադրվել միայն ընդդիմադիր խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորների թվից: Միաժամանակ հարկ է արձանագրել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2021թ. ապրիլի 13-ի թիվ ՍԴՈ-1587 որոշմամբ Սահմանադրական դատարանը, վերլուծելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի՝ Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, ինչպես նաև մշտական հանձնաժողովների նախագահների թեկնածուների առաջադրմանն ու ընտրությանը և Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, ինչպես նաև մշտական հանձնաժողովների նախագահների հետ կանչմանը և վերջիններիս լիազորությունների դադարեցմանը վերաբերող դրույթները, հանգել է այն եզրակացության, որ չնայած նրան, որ նշված պաշտոններում առաջադրման իրավունք ունեն կոնկրետ խմբակցությունները, նշված պաշտոններից հետ կանչման և լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքով օրենսդիրն օժտել է հավասարապես բոլոր խմբակցություններին:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական հանրապետություն է, մշտական հանձնաժողովները հանդիսանում են Ազգային ժողովի կարևորագույն մարմին և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ստեղծվում են օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար, հետևաբար մշտական հանձնաժողովների նախագահների ընտրությունը կարևորվել է այնքանով, որ չի թողնվել միայն խմբակցությունների հայեցողությանը և մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածուն կարող է ընտրվել հանձնաժողովի նախագահ միայն պատգամավորների ձայների մեծամասնությամբ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն մշտական հանձնաժողովների նախագահներ թեկնածուների առաջադրման իրավունքը պահպանվում է մինչեւ Ազգային ժողովի լիազորությունների ավարտը: Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը Ազգային ժողովի պատգամավոր Վահե Հակոբյանի՝ որպես Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման ընդունմամբ նպատակ ունի հետագայում ընտրելու հանձնաժողովի նախագահի, ով կկատարի իր պարտականությունները հավուր պատշաճի՝ ապահովելով հանձնաժողովի բնականոն գործունեությունը, միաժամանակ կմասնակցի ԱԺ խորհրդի նիստերին, որտեղ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ի պաշտոնե ընդգրկված են մշտական հանձնաժողովների նախագահները: